ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին և թեմական առաջնորդներին ներկայացրեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի Հայրապետական Տնօրինությունը՝ Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդական Փոխանորդ գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանին Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ նշանակելու մասին:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներն ու թեմական առաջնորդները հաջողություն մաղթեցին Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդին՝ Վեհափառ Հայրապետի բացակայության շրջանում Մայր Աթոռի աշխատանքները հաջողությամբ իրականացնելու դժվարին գործում::

Սրբազան Հայրը վստահեցրեց, որ ջանք ու եռանդ չի խնայի Վեհափառ Հայրապետի վստահությունն արդարացնելու համար՝ միաժամանակ ակնկալելով Գերագույն Հոգևոր Խորհրդի, հոգևոր դասի և Մայր Աթոռի պաշտոնեության աջակցությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին նաև 1988 թ. երկրաշարժի 10-րդ տարելիցին Հայաստանյայց Եկեղեցու մասնակցությանը վերաբերող կազմակերպչական հարցեր: